№ 17 ՇԱԲԱԹ 10 ՄԱՅԻՍԻ 1875 № 17

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԷՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ։
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
«Въ редак. газеты Пчела Арменіи»

ՈՒԹԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ 10 ԻՆ ՄԱՅԻՍԻ

Լոյս տեսան սրբ. Հայր Գաբրիէլն Սրուանձտեանցի երկու աշխատասիրութիւնքը՝ «Գրոց և Բրոց» ու „Հնոց և Նորոց"։ Սոքա ընտիր նիւթեր են ազգային պատմութեան համար, որոյ վերջին մասը, այն է Հայոց Կիլիկեան թագաւորութեան անկումից յետ եկող 500 տարուայ ժամանակամիջոցը, շատ մութն է և թերի. և աչա այսպիսի աշխատութիւնք և բերանացի աւանդութիւնք, որոնք անշուշտ պահպանված են ժողովրդեան մէջ կարող են միայն լուսաբանել մեր պատմութեան այս մութը և իբրև մեզ աւելի մօտիկ ուրեմն և աւելի հետաքրքրական մասը։ Իրաւի զարմանալի երևոյթ է մեր պատմութեան մէջ, թէ ինչպիսի զօրութիւն պիտի լինէր ազգի այն մասի մէջ, որ մնացած էր իր հայրենիքում և պահպանած իր ազգութիւնը մինչև ցայժմ, չնայելով այն շրջապատող հանգամանքներին, որոնք անտանելի են եղած։ Աւելի է արտաքնապէս 500 կամ 600 տարի։ Բայց այսպիսի երկարատև ժամանակամիջոցում անընդհատ նեղութեանց, հարստահարութեանց, բռնութեանց տանելը. սա մի զուգադիպութիւն է, սորա համար մեծ բարոյական ոյժ և ամուր զօրութիւն հարկաւոր է։ Եւ աչա այս զօրութիւնը եղել է ազգի երկրագործ մասի սէրը դէպի իր հայրենիքն ու սուրբ եկեղեցին իր սրբավայրերով, որոնք զօհել են տուել ազգին ամէն բան, միայն նրանցից անբաժան մնալու համար։

Իրաւ է, այս երկար ու ձիգ տանջանաց ժամանակամիջոցում չեն յայտնել մեծ աշխարհակալներ, ինչպիսի էին Չինգիզխան իւր յաջորդներով, Լենկթեմուր և այլն. բայց Հայաստանը բաժանված բազմաթիւ մահմեդական բէկերի, աղաների և քիւրդ ու քիւրդմէն ցեղերի մէջ, ենթարկված է եղել աւելի մեծամեծ թշուառութեանց։ Նա ստիպված էր մի մեծ աշխարհակալի փոխանակ, ենթարկվելու բազմաթիւ մանր բռնաւորների կամքին և կրից, որոնք իրանց չար և սահման չունէին։ Հայ ազգի Մնացորդը իր դաժան բռնաւորների աչքում, ինչն իր մէջ կրում էր մխիթարութիւն, Հայ անուան հետ համանշան համարելով նահապետութիւնն, յուսալով իր սուրբ կրօնի և սրբավայրերի զօրութեան վերայ, որոնք պիտի փրկեն նրան և պահպանեն կորստից, և որոնք ամենաթանկագին սեփականութիւնք է համարել իրան։ Այնքան մեծ է համարել և թանկագին այս սեփականութիւնքն, որ չը նայելով իր թշուառութեան աշխատել է աւանդել այն իր որդոց և թոռանց, աներկբայ լինելով, որ նոքա ևս այդ սեփականութիւններից անանջատ մնալու համար պիտի կրեն ամենատեսակ զրկանք և թշուառութիւնք։ Այսպէս Հայաստանցի հայը չէ խնայել իր որդոց և թոռանց անգամ իր հայրենի հողն և սուրբ տեղերը թափուր չը թողնելու համար։ Իրաւ որ հայրենի հողը, ջուրն ու օդը ունեն իրանց գրաւիչ և գեղեցիկ զօրութիւնը, որ անհասկանալի է պանդխտութեան մէջ մեծացողների և համաշխարհաքաղաքացու համար։

Վարդան, Վահան Մամիկոնեանց և այլ Հայ իշխանների պատերազմը կրօնի և Հայրենեաց, իրանց սեփականութեանց, պաշտպանութեան համար մեծագործութիւնք են և այնպիսիք պաշտելի են իրանց նահատակութեանց համար. վերջին վեցհարիւր տարիների ընթացքում Հայաստանում մնացած ոչ իշխան՝ այլ երկրագործ ու արհեստաւոր խեղճ ու աղքատ Հայերի բոլոր կեանքը նահատակութիւն է իրանց սուրբ տեղերի պահպանութեան և Հայաստանի հողի վերայ Հայ ազգի սերմը պահպանելու համար։

Մի՞թէ քան նախկին վաճառաւոր Հայերը պակաս համարելի է հայրենասիրութեան մէջ Ավգաղեւրցի Խըդօմանց Հայրն, որ առաջը առնում է Մշու տա Հայերի գաղթելուն յօտարութիւն. ասելով „երթանք, երթանք, բա խմո՞ւ թողենք մեր եկեղեցին, մեր պապերու գերեզմններ, մեր վանքեր, սըրբ Ովանէս, սըրբ Կարապետ, Առաքելաք (Առաքելոց վանք) էս մեր սըրբեր, խաչեր, խաչքարեր, էս մեր կարգաւորներ, մեր ժամ ու պատարագներ... կեղնի՞ որ էրթանք թողնենք թրքերուն ու էրթանք... և այլն։

Պարզ են մի Մշեցի մեղացու այս խօսքերը, բայց որպիսի զօրեղ զգացման ծնունդ են նոքա, եթէ յիշենք, որ դրանց արտասանողը շրջապատած էր ամենակերպ նեղութիւններով, որոնք ոչին ապաստան արած էին գաղթել ցանկացողներին։ Որպիսի գոյներ պիտի ստանար արդեօք այս զգացմունքը ճարտասան և հանճարեղ Եղիշէի գրչի տակ։ Ո՛րքան այսպիսի զգացմունք կրող անձինք, յընթացս վեց հարիւր տարիների անյայտութեան մէջ մնացել են՝ թողնելով միայն այն հետևանքը, որ մինչև ցայսօր Հայ ազգի նշանաւոր մասը տանելով կատարեալ թշուառութեան մնացել է իր հայրենի երկրում և պահպանել ազգային յատկանիշները։

Վահան Մամիկոնեանի զաւակ համարելի չե՞ արդեօք Տէր Պօղոսը (որ սովորաբար Քէշիշ Պօղէ), որ Միրզաքէ Ասորի իշխանի հետ մօտ 1820 թուականին տասն հազար խեղճ Հայերի և Ասորիների զինուորելով 40,000 Քրդերի դէմ, որ կամենում էին բոլոր քրիստոնեաներին կոտորել Տարօնոյ երկրում, ջարդում էին նրանց հերոսական քաջութիւններ գործելով, ցրվում թշնամիներուն և պահպանում քրիստոնեաներին ջնջումից։ Արդեօք քանի տէր Պօղոսներ (Քէշիշ Պօղէներ) ծնել է Հայաստանը վերջին հինգ կամ վեց դարերի ընթացքում։ Նորա անձնական քաջութիւնքն և քաջալերիչ պարզ խօսքերը, որոնք Հայ և Ասորի ճնշեալ զինուորներին դիւցազններ են դարձնում և կոտրում քաջ և փառաց Քրդերի ամբարտաւանութիւնն ու գոռոզութիւնը, արդեօք որպիսի ձևով և գոյներով կը նկարագրէր ճարտասան Ղազար Փարբեցին։ Չեն եղել ոչ Եղիշէ և ոչ Ղազար. ուստի և Խըդօների ու Տէր Պօղոսների պատմութիւնը մնացել է լոկ ժողովրդական աւանդութեանց և անտիպ գրուածքների մէջ։ Հասկանալի է, թէ որպիսի նշանակութիւն պիտի ունենան այս անտիպ գրութիւնքը և ժողովրդական աւանդութիւնքն ու վէպերը մի ազգային պատմութեան համար. նոքա պիտի լուսաբանեն մեր ազգի կեանքը վերջին դարերում, որ շատ կարևոր է։ Հայաստանը լի է յիշատակարաններով. սոցա իւրաքանչիւրը քննելն է, ազգային պատմութեան լուսաբանութեան համար։ Խորին շնորհակալութեան արժանի է թէ Հայր Գաբրիէլն Սրուանձտեանցն և թէ նոքա, ովք պարապում են ժողովելով ազգային պատմութեան վերաբերեալ ամենատեսակ նիւթեր, ցանկանում ենք նրանց կատարեալ յաջողութիւն։

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱԶԷԹԱՃԻ ԱՂԲԱՐ

Տիօր ասօրս ես տիմեասան պէկեաշար մարդուն մէկն էի, անոր համար ալ ձեզի հետ ծանօթութիւն չունէի, բայց հիմի Ախալցխու ջահել կարդացողները քիչմ միտքս բացին, ըշտը դուզիմ քեզի հետ աղբար ըլլիլ, որ պաշէպիրայ քու գազէթներդ կարդալով աչա միտքս բացուի, ես ալ քիչմ մարդու սրա խառնուիմ։

Հըմը հիմի մէ քանիմ խօսք ունիմ ըսելու հրամանոցդ, խնդրեմ կը որ քու խելացի գազէթիդ մէ քէօշին մէջ ալ անոնք հաւքեցնես։

Տը լաւ անկաձ էրէ որ աս ըսածներուս միջին բան մը մեղքան չըննես։ Ասով չէտեմ երեք տարի է թէ չորս տարի մեր Ախալցխու ջահէլները թէատրոն կխաղան, ես ալ փարաներուս չէի զըմըշի որ երթայի մէմ տեսնէի, չըտանն անէ պալօպիր դէօղպաչիներ կու գան մեր քաղաքը, էհ անոնց կէհտէպիր կերթայի։ Հըմը աս թէատրոնը հէչ չէի տեսեր, չունքի նէվաէ խմացեր էի երթըցողներէն, որ անոնք դէօղպաչիաց պէս զարմանալի բաներ չեն էնէ։

Հըմը աս տարի Զատկին երկուշաբթին օրը իմացայ որ կենէ պիտի խաղան դէօր ջիննէմ ըսի ծեր չէ գնացէ տասը շահին հըլը մէմ երթամ տեսնիմ։ Ապայ տասը շահընաց մէ պիլէթմ, էլայ գնացի անոր ցայտ սուին վարժատան տղոցը աթոռքներուն վրայ, մէքէս անցաւ թէ գար կարդըցնեն պիտի, հէրնէվս, գնացեր եմ վարան ինչ մէ պզտի թուղթմ էր փակած աթոռքին վրայ, թղթին վրայ 103 էր գրած աթոռ-խէժին վրայ նստայ։

Մէմալ տեսնիմ որ դանկը քաշեցին ֆէրատէն բացին, երեք չորս հոգի դուրս եկան լինէք ալ պատկերներուն մէջ որ կար քաշած մեր թագաւորները անոնց գըլխանէլին, խուլ հաէ բերըները բացին սկսան խօսել, խօսակ մեր Հայոց թագաւորներուն բերնէն կխօսէին։

Անոնք գնացին մէմա տեսնիմ մէ աղջիկմ երկու երեք հատ կէնայ անպէս հագած կապած պապալիկ դէլըղանլիք դուս եկան, սոսկը սկսան խօսել, ինչ փայտայ ըսածները բեւթին միտքս չէ որ ծերեն տօր վերջը պատմէի քէֆդ գար, Հըմը չը-

Ֆ Է Լ Ի Ե Տ Օ Ն

Զատիկը բերում է իւր հետ օրանց եւ մօտանց Աւետարանի բանկը. նորա պլոծ եւ պլոծները, Զօլոտոյեվի խնդիրը. Ալէքսանդրապօլի որբանոցները եւ Բէկնազարեանը. մի բարօք Քաղաքային վարչութիւնն էլ ընուժեան հետ արթնացաւ. Սբ. Նշան եկեղեցւոյ սրբազան իրեղէնները սատանան գողացաւ. Բէթղեհէմի ուսումնարանը. Վեհափառ կաթողիկոսի այցելութիւն է տալ Վ. Ահան վար. Բաստամեանցը. Իսկ Երևանու վիճակի հոգևոր Թեմական վերատեսուչը չէ այցելում իւրեան յանձնած ուսումնարաններին. պարտականութեանը անպարտականութիւն է. ամենայն մարդ պարտական չէ։

—

Զատիկն անցաւ, անցան սորա հետ և ուրախալի օրերը։ Ուրախալի էին այդ օրերը նորա համար, որ այդ քրիստոնէական երեկոյ տօնը պատահում է գարնան սկզբներում, երբ բնութիւնն ինքն սթափւում է ձմերային խոր քնից և մեզ հետ տօնում է իւր սթափումն։ Այդ ժամանակ բնութիւնը նորոգվում է. ծառերը և թփերը ծածկվում են կանաչ տերևներով և գոյն գոյն ծաղիկներով. մարդիկ էլ սթափվելով վերջապէս եօթն եօթնեակ պաս պահելուց, որի ժամանակ ամենայն տեսակ հասարակական տեղերում խափանուած էին պար, բեմական ներկայացումներ և այլն և արգելված չէին միայն Երկրօվի, Սաազլինի և tutti quanti-ների զառախօսութիւնները, Եակլին Եակլիչի հաջողակութեան ներկայացումները և նորին պարտանների կօնցերտները — այդ ժամանակ իսկ մարդիկ աշխատում էին փոխել իւրեանց ձմերային հագուստը, ինչպէս սովոր են մինչ փոխելու իւրեանց համոզմունքը և փաթաթուել գարնանային շորերի մէջ։ Այս ինչու Զատկի նախորդ օրերին կանայք փափկասունք, թողնելով իւրեանց տուն ու տեղ, որդիք և զաւակունք՝ երամ երամ թափառում էին Թիֆլիսի փողոցներում այս կամ այն մօդնի մաղազիներին այցելութիւն անելու, նրանց հարստացնելու, իւրեանց մարդկերանց դատարկելու. ամենայն տեսակ շոր ու փալասին ահագին փողեր վճարելու, թէ ինչ է, Զատկի օրից յետ եկող օրերում չերեւալու և իւրեանց հագուստով այնտեղ պարծենալու։ Ինչ մխիթարութիւն է խեղճերի համար հաւնուիլ ոչ իւրեանց, այլ ուրիշների համար...

Այս տարի էլ, ինչպէս ամենայն տարի, Նորաշէն, Սբ. Նշան, Սիոն և Անչխաւատ եկեղեցիներում կարելի էր նկատել մեր կանանց իւրեանց Զատկի համար կարած նոր հագուստներով։ Բայց որքան որ թանգ և թանգ էր նրանց շորերը, այնքան էլ անհամ և անճաշակ։ Մօդնի մաղազիններում մերոնք օտարներից առավելեան նորաձև եւրոպական շորերին, բայց ճաշակը նոցա մնաց միեւնոյն սոսկականը։ Ահա մի կին մալաթի լէչաքը գլխին, զարբաբ ճակատալուն ճակատին կպցրած, նոր մօդնի տարբերով զլած չոր հագին, հարցնում եմ ով է՝ բաղալ Գիգօլի կնիկ կասեն խոյին։ Էն միւսը ով է նոյն տեսակ զուքսով, բայց աւելի անհամ ու անճաշակ չորով Միկիտան Միխակի կամ չիրաջի Սամսոնի աղջիկ կամ կնիկ կը լինէք խոյին։

Այն իսկ ժամանակ, երբ մեր քաղաքացիների կանայքը Սբ. Նշան եկեղեցում իւրեանց նոր զգեստով պարծենում ու հպարտանում էին, նոյն մարդիկը աւետարանական բանկի ժողովին ներկայ էին գտնվում և վարչութեան նոր անդամների ընտրութեան սպասում.........

Ո՜հ որքան սրտեր էին այն ժամանակ անհամբեր սպասում և սաստիկ բաբախում։ Հին անդամներին Զատիկը շնորհաւորելիս նոքա հաւատացնում էին թէ նրանցից լաւը չըկայ, որ ջոկին, իսկ իւրեանք վախվում էին այստեղ և այնտեղ անդամի պաշտօն ստանալու պատրաստութիւն տեսնելու։ Ահա և հասաւ հերթն ընտրութեան։ «Ա՜յ աղբեր ջան, իս ու իմ Աստուած գիտում իմ փիլ համար սխրական կենձի պցելու». բայց մէկ էլ տեսնես այդ կուղիան կէնձին սև գունդի մէջ էր գլորվում, խեղճին սևացնում և յետոյ նրա հետ նրա սևացած գլուխը լափիւ, նրան մխիթարում ու կուղիան կէնձան սաստիկ անիծում։ Ահա մէկ ուրիշը, որ առաջուց մի քանի մարդոց խօսք էր վեր առել. մտայ էր գնացել անդամ ջոկելու յանկարծ սևացաւ...... ահ ինչ պատահեցաւ, նրան խօսք տուող մարդը վկյից է ընդունում ու նրա գլխին աւետարան կարդում...... Տեսէք թէ ինչ է ասում...... Ա՜յ դու անամօթ էանէնդ իս խօսքիդ տէր... քիչ էր քու մամէն ու քու պարդէղին միր անից չահուեկ...... ումէն պախաս մարդ իմ, վար իմ սխրալ ջդրու չէք ուզում ջոկի ու նրա պէս ինձ սևցնում... Ահա ձեզ խամթաքալայ, որի ու հիմի էլ ցերեկն հանէք. կատաղած մարդուն էլ ինչ կու ասէք, բերանը բացեք ու աչքերը խփեք, ինչքան բան ասեք, որ ինքն էլ բերայեր։ Աւրի ու հիմի գիժ ասաւաց մարդուն համաքով բան խօսացիր, ան նրան աւետարական բանկի մէջ անդամ նշանակիր... կու խրատայինէ բոլոր մուշտարուն, խոտմ մեր բանկատէր դալալները ումէ փողով չահումն...

Ահա այսպէս կամ սորա նման կարգով երեք մարդ պատրին ու կոլոլացրին, նրանց սիրտ ու ամբոը սաստիկ կոտրելով...... Այո, պարոններ...... ինչու էիք նրանց խօսքին հաւատում ու Զատկի օրը նրանց հետ պաչպըչվում. դունա չէիք գիտեր, որ նրանց պաչը Յուդայի համբոյր էր, տեսաք հօմ հիմի թէ ինչպէս չուստով նրանք ձեզ ծախեցին ու իրանց մարդկերանց սիրով ընտրեցին...... Մի և նոյն կատում մնացած անդամներին, որոնց դուրս գալու հերթն է միւս տարի, թող նոքա աւելի խաչեն ու հեռատես լինին ու մալոյ չը գնան օտարի խօսքին, թէ չէ հոմ գիտէն հիմի, թէ կուղիան կէնձին ինչ խասիաթ ունի՝ մէկ էլ տեսնես սև գունդի մէջ պպղեց...... խմում ինչ կանէք... ոլած մարդու հալը դուք հօմ լաւ գիտէք ու թէ չէք գիտի, աչքերդ բացէք, մէ լաւ անտաղեցէք թէ ինչի են նման ձեր հին ընկերները՝ կարծես թէ ջրի մէջ ընկղմած ձեր տանուլ հանեք լինին...

Խոհեմութիւն և հեռատեսութիւնը ամեն բանի մէջ է հարկաւոր, թէ խօսելում թէ նրատելում և թէ գործելում. բայց այդ ժողովին կարծես ոչ, Զօլոտոյեւը չէր բերել իւր հետ այդ թանգագին գանձը. նա դանդաղաւ ժողովին բանկի կառավարչի վերայ թէ նրան ցոյց չը տուեց բանկի գրքերն ու հաշիւները... Անելու բան է...... որի ու հիմի մեր քաղաքից քահանաներից խնդրի, որ նոքա ձեզ ասեն, թէ որտեղից են քաղում նրանք իրանց քարոզների նիւթը...... աբա ինչ կասեն, կուղէք որ դրամով նրանց հացը կտրէք ու նրանց քարոզների պաչարը պակասցնէք...... չէ՞ որ պարոն Զէլատևյեւը էլ աւետարանաց բանկի դիրեկտոր է և փոքր ինչ վաճառական այդ իւր խնդիրքով......

Զատկի շաբաթը պակաս ուրախութիւն չէ պատճառել Ալէքսանդրապօլի թէ որբանոցին և թէ այնտեղի աստուածապաշտ ժողովրդին. Ալէքսանդրապօլի որբանոցը մխիթարվում էին Արդութեան ուսումնարանի աշակերտուհիների կարգով եկեղեցի գնալու վերայ. նրանց ման գալու եղանակին տեսնել գիծերով և «բռով գլխից մարդը» աղաղակելով...... այնքան մեծ եւ անսպասելի է նոցա ուրախութիւնը, որ խեղճ տեսուչ Բէկնազարեանին համբերութիւնից դուրս են հանել, փայտը բարձրանալ տալեք և հայհոյեալ զօրանոյլ կարողանում էր նրանց անկարգութիւնը դադարեցնել թէ խփելով և թէ անարգելով... Ես լողորովին հաւատում եմ այս անկեղծութեան ինձ հաղորդող իմ բարեկամին, քանի որ լաւ գիտեմ որ յիշեալ տեսուչը սովոր է այդ տեսակ միջոցների դանդաղելու...... Աստուածապաշտ ժողովրդեան մխիթարութիւն և ուրախութիւն էլ այնտեղի մի քահանայի քարոզն էր, որ իրա ազդեցութեամբ և հետեւանքով արժանի է ամբողջապէս այստեղ բերելու ի մխիթարութիւն և ուրախութիւն մեր միւս քաղաքաց աստուածապաշտ ժողովրդի։ Ահա այս էր քահանայի քարոզը՝ «Աստուածասէր սիրելիք. Ադամն հօր և Եւայից եւ հողեղէն Արէլ ամէն։ Աստուածային Սուրբ Հոպատմէնայ չի ըլլէ, սիրտս չի համբերեր սալթ ազքանը ըսեմ:

Մէ կռապաշտ Թագաւորմ մէ աղջիկըմ ունէր, աս աղջիկը (խոստովանիմ ու հաւատամ) մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսին հաւատաց, հայն ա աս բանը չընդունեց, աղջըկանը սպաննել տըվեց, երոր զարկին խեղճ աղջըկանը մէժա տեսնիմ մէ Թարաֆէն ամպը գոռաց, մէկալէն անձրև, կայծակ, ալ անպէս մէ ղալմաղալըմ պըծաւ որ չումըս չորցաւ: Թագաւորը աս հրաշքները տեսնելուն պէս ծընկըներուն զարկեց լաց օրօտում, աղջըկս սաղցուցէք կը ճըվար հըմը նէ չարա, լուսնիակը էրթէցին անցաւ, տեսաւ որ ալ ճըլէճ չը կայ, աղջըկանը կոկիծը մէ Թարաֆէն, Աստուծու բարկութիւնը մէ Թարաֆէն, քաշեց գէմէն ինքնիրեն զարկեց, ու գնաց՝ անդին աշխարհքը աղջըկանը քով, փիշմանին անէ, շատ մեղքս տըվեց, գլուխս խուփը վերցաւ մտածմունքը ինձի առաւ, Թը աս ինչ բաներ եղեր անցեր գնացեր է աշխրքիս երեսը, աս մտմուքիս հիւտէի մէմա աչեմ օր հէրքէշ ծափ կզարնեն ու բաւայ բաւայ կճվան, չիտակն անէ իմայ քէֆս էկաւ, ես ալ սկսայ ամըրըմ ծափ զարնել ու ճըվալ բաւա, բաւա, բաւա:

Հըմը ալլահ խըչին ամէր, ասոնց հանքանի խաղան պիտի երթամ, Թէատրոնին ծուծը պիտի հանեմ ու իմ եօլտաշներուս պիտի ղանըրըմիշ էնիմ, որ անոնք ալ էրթան, ասպէս բանի համար 5 շահի 10 շահի խնայելը անխելքութիւն է:

Զունքի գեօզղամօղ զարադեօզներուն կերթանք, հէմ անոնց փարա կուտանք հէմ քանիմ ապասի ալ բախու գինու կխարճենք, ու բանմալ չենք սորվի սալթ խաբէրյութիւն, հըմը աս Թէատրոնը ալլահ խըչին հէմ մարդու աչքը բան կտեսնի, հէմ միտքը կը բացուի, մարդ գիմանայ Թէ աշխրքիս երեսը ինչեր են եղեր, ինչ Թագաւորներ ինչ զօրքեր ունին եղէ հայերը, աչէ տիօր ասօրս ես չիտէի, Թէ հայերը էվէլըմ կռապաշտ են եղեր, բըտը ասոր խմանալուս պատճառը Թէատրոնն եղաւ, ասոնց սավայի կիմանանք Թէ ջերմեռանդութիւն կայ եղէ էվէլըմ. տես մէ աղջըկըմ էր հըմը լուս հաւտին ուղուրին ինչեր էրաւ, ինքը մեռաւ հըմը, ինչքան մարդու ալ սուրբ հաւատը ընդունելու պատճառ եղաւ. հիմի չիտակն ըսէ ղալէթամճի ալըսսր մեր կաթողիկ աղբրտիքը Թէատրոն էրթըյած ըլլէին, ապպէս հաւտի ուղուրի մեռնողներ տեսնէին, խօ ինի փափին ապուզամպալ կոնցակովը պասերը չէին ուտեր:

Ծօ ջանըմ, Գաղէթա........ որ, խփ ենսան օլանին իմաստութեանը խելք չի հասնիր, հըլը աչէ ինչպալ մտածեր են հազարաւոր տարիներ առաջ անցած գընացած մարդկանց մէյտան հանեն կը, իբարու հետ խօսեցընեն կը, անոնց վարքին ու բարքը լաւութիւններն ու գէշութիւնները մէկ մէկ ցոյց կուտան, որ մենքալ խըրատ առնենք, տեսա՞ր վարժատունը տեսա՞ր մի քարոզը. ես ու իմ Աստուածս:

Մարտայի Կարօ.

Խմբագրութիւնս ստացաւ յօգուտ Փոքր-Ասիայի սովալլուկների Ներսիսեան դպրոցի երրորդ և չորրորդ դասատան աշակերտներից 13 ռուբլի 40 կոպ. որ և յանձնեց մեծ. պ. Հ. Ենֆիաճեանցին վասն հասուցանելոյ ըստ պատկանելոյն:

—

Շամախւոյ երկսեռ դպրոցաց մատենադարանի մեծ. գործակատարները ուղղած են խմբագրութեանս մատենադարանի հաշիւն յընթացս 1874 ամի ի հրատարակութիւն. ահա այն.

Առ 1-ըն 1874 Թուականի մնացել է զուտ գումար 262 ռ. 76 կ. Նոյն Թուականում ստացած մուտքն է 407 ռուբլի 23 կ, ընդ ամենըն է 661 ռ. 99 կ.:

1874 Թուականում եղել են ծախք 313 ռ. 45 կոպ., որից 274 ռ. 62 կոպ. հայերէն և ռուսերէն գրքերի, օրագրաց և լրագրաց համար. իսկ 38 ռ. 83 կ. գրատան վերաբերեալ մանր ծախուց համար: Առ 1-ըն յունվարի 1875 ամի մնում է առձեռն դրամ 348 ռ. 54 կ.

Առ 1-ըն Յունվարի 1874 Թուականի մատենադարանն ունէր 270 հեղինակութիւնք, յընթացս սոյն Թուականի աւելացած են 167, ընդ ամենն 437 հեղինակութիւնք — Թւով 814 հատ գրեանք, արժողութեամբ 867 ռուբլի 8 կոպէկ:

—

Յընթացս 1874 ամի վեր են առնուած ընթերցանութեան համար 797 անգամ գրեանք: Հաշւելով Շամախւոյ հայ բնակչաց 3606 հոգւոյ վերայ՝ ընկնում է համարեայ 5 հոգւուն 1 գիր:

—

Պ. Յ. Նազարեանցը հաղորդում է Ագուլիսից — «Ագուլեաց երկսեռ ուսումնարանների հոգաբարձուները փառաւոր հանդիսաւ ապրիլի 2-ին յուղարկաւորեց հանգուցեալ Ս. Մելիքեանցի դիակը, որ Ագուլիսի երկսեռ ուսումնարաններին կտակել էր 200 ռուբլի: Այդ գումարով Ագուլեաց ուսումնարանում պէտք է ուսում առնէ մի աղքատ աշակերտ: Ժողովրդի խուռն բազմութեան մէջ հանգուցեալի դագաղը շրջապատել էին աշակերտուհիները, վարժապետուհին և վարժապետները: Այդ վերջիններիցը 1-ը ներկայում ճառ կարդացին: —

—Շքեղ հանդիսիւ կատարուեցաւ կրկնագանկի տօնը Ագուլսի Սբ. Թովմայի վանքում: Մերձակայ գիւղերից վանքի ընդարձակ գաւիթը լցուել էր ուխտաւորների մեծ բազմութիւնը:

—Նորերումս Երևան Թեմի վիրատեսուչը, Պ. Գ. Յարութիւնեանցը, այցելեց Ագուլիսի երկսեռ ուսումնարանները:

—Հայր Փափազեանը 8 տարի քահանայութեան և ուսուցչութեան պաշտօն վարելուց յետոյ հեռացաւ Աուլիսից, որին բաւական զգալի եղաւ տէր հօր հրաժարումը:

—

Խմբագրութիւնս ստացաւ Արարատ ամսագրի մարտ ամսուայ համարը:

—

Ամսոյս 12-ից սկսվում են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցում հրապարակական հարցաքննութիւնները: Հարցաքննութեանց ցուցակը կարելի է տեսնել նոյն ուսումնարանի դահլիճում.

—

Աժդարխանից մեզ գրում են հետևեալը՝

—Աղքատաց հին հոգաբարձութիւնը տուեց իւր հաշիւը, և նորը սկսեց իւր գործունէութիւնը չաքամթական մի անգամ նկատ նշանակելով: Արդէն 100,000 ռուբլի գումար, որ առաջ պահվում էր մասնաւոր անձերում, այժմ օրինաւոր կերպով յանձնված է ներութենական գանձատուն:

—Յարութեան տօնին եկեղեցու մէջ և առանձին նուիրատուութեամբ այցելութեան փոխարէն հաւաքած է այլ ևս 203 ռ. 46 կոպ.:

—Տաճկաստանի սովալլուկների համար ընդամենը հաւաքուել է Աժդարխանում 1400 ռ. չափ, որպէս ասում են, և ինարկէ այդ գումարը արդէն ուղարկուած կլինի վեհափառին:

ՆԵՐՔԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԵՒԸ

—

Անցեալ ուրբաթ երեկոյ, ամսոյս 2-ին բացվեցաւ քաղաքային խորհրդի (դումայ) նստւքը ընդ նախագահութեամբ քաղաքագլխի պաշտօնակատարի պ. Լ. Եղիզբարեանի:

Պ. նախագահը բացեց նիստը մի համառօտ ճառով, որով հրաւիրեց պ. պ. իրաւասու անդամներին իւրեանց հմտութեամբ, փորձառութեամբ և եռանդուն գործունէութեամբ աջակցել իւրեան առաջարկելի գործերի քննութեան ժամանակ, որպէս զի այս անգամի նստքը արգիւնաւոր լինին քաղաքի բարօրութեան համար: Սորանից յետոյ պ. նախագահը կարդաց Բառօն Նիկոլայի շնորհակալական նամակը նորան պատուաւոր քաղաքացւոյ կոչումը տալու համար:

Ապա քաղաքային խորհրդի քարտուղար պ. Մելքբեանը կարդաց հետևեալ զեկուցմունքը:

1). Առաջին զեկուցումից իմացանք, որ քաղաքային վարչութիւնը (ուպրավայ) անցեալ փետրվարի 17-ին, ընդունելով գործերը հին վարչութիւնից, մտել է պաշտօնի մէջ. ուստի այն օրից արձակուած են համարվում հին վարչութեան անդամները և գործավարները: Գործավարներից մի քանիսին մասնաւորապէս, որոշեալ վարձով, դեռ ևս պահում են, մինչև որ խորհուրդը կընտրէ նորերին: Որբերի խնամակալութեան մասին, որովհետև դեռ ևս նոր կանոնադրութիւնը չէ մտած, ուստի նա մնացել է ըստ հին օրինաց, ունենալով իւր անդամների մէջ և կառավարութիւնից նշանակուած անդամին, որ առաջուայ կանոնադրութեամբ վարում էր և վարչութեան բոլոր գործերը: Այժմ կառավարութիւնից նշանակուած անդամը, ներկայ վարչութեան կարծիքով, պէտք է մնար խնամակալութեան մէջ: Այս հիման վերայ այդ անդամը ցայն օր ստանում էր իւր առաջուայ ռոճիկը:

Այս զեկուցման խորհուրդը չը հաստատեց պահանջելով վարչութիւնից պատրաստել երկրորդ նստի համար մանրամասն տեղեկութիւնք խնամակալութեան մէջ կառավարութեան անդամի մասնակցութեան մասին:

2). Երկրորդ զեկուցումը վերաբերում էր խորհրդի վճիռների հաստատութեանց քաղաքային գործոց նահանգական ատեանի կողմից և մի քանի տարակուսութեանց, որոնք առաջին քայլափոխում իսկ հանդիպել են խորհրդի և ատենի մէջ — բայց այդ բոլորը վճռուել են առանց բողոքի:

Այս զեկուցման խորհուրդը ի նկատի առաւ ապագայում այդ ցուցմանց համաձայն վարվելու համար:

Նոյն զեկուցումից տեղեկացանք, որ վարչութեան անդամների ռոճիկը աւելացնելու դէմ իրաւասու պ. Մ. Դօլուխանեանի բողոքը առանց հետևանքի է Թողել:

Վերջին զեկուցումն վերաբերում էր քաղաքիս անշարժ կալուածների գնահատութեան նոր գներին համաձայն տուրք պահանջելու մասին, որ յետաձգուել է մինչև ներկայ տարւոյս յուլիս ամիսը: Այս զեկուցման խորհուրդը հաստատեց: Զեկուցումներից յետոյ պէտք է դիմեին հերթական հարցերին, բայց պ. Նախագահը յայտնեց, որ նիստը բանալուց մի ժամ առաջ ստացաւ պ. Նահանգապետից մի առաջարկութիւն փոխարքայի կողմից Միխայլովեան կամուրջը և խճուղին ջրելու մասին, որ և կամենում է անյապաղ ենթարկել պ. պ. իրաւասու անդամների քննութեանը: Խորհուրդը համաձայնեցաւ պ. Նախագահի առաջարկութեան հետ և սկսեցաւ քննութիւնը: Մի քանի վիճաբանութիւններից յետոյ, պ. պ. իրաւասուները այն եզրակացութեանը եկան, որ քանի այդ հարցին վերաբերեալ տեղեկութիւնք չեն առաջարկած խորհրդին, անհնարին է այժմ իսկ վճռել այդ հարցը. ուստի յետաձգուել է մինչև բոլոր տեղեկութիւնների ժողովելը: Բայց որպէս զի այդ կարևոր հարցը բարձի Թողի չը մնայ մինչև խորհրդի վճիռը, խնդրեցին պ. Նախագահին յանձն առնել ջրել տալ կամուրջն և խճուղին անտեսաբար այն գումարից, (500ռ.) որ նշանակուած էր ցայժմ այդ առարկայի համար: Պ. Եղիզբարեանը զիջաւ խորհրդի խնդրանաց և յանձն առաւ վերոյիշեալ տեղերի ջրելու պատասխանատւութիւնը իւր վերայ:

Հուսկ յետոյ ժողովը դիմեց վարչութեան առաջարկած շտատի քննութեանը, որ և շարունակվեցաւ երկրորդ և երրորդ (ամսոյս 5ին և 8-ին) նստերում: Այս ընդունված շտատը, որ մեծ մասամբ պ. Գօլուխանեանի և այլ մի քանիսի կազմածն էր.

Քաղաքագլխին 4000 ռ. վարչութեան անդամներին (3000 ական.) 9000. խորհրդի քարտուղարին 2000. դրագրին 360. գլխաւոր հաշուապահին 1800. երկու օգնականներին (1000 ական ռ.) 2000. գանձապահին 1500. փոխհաշուողին 500. Էկզեկուտորին 600. փաստաբանին 1500. գործավարներին (1000 ական) 3000. գրագիրներին 3000. պահապաններին, լուսաւոր. և այլն 2000. կոմիսարներին(720ակ) 4320. դեսեատնիկներին (120 ական) 720. առևտրական վերակացուներին (800 ակ) 1600. բազարի վերակացուներին (300ակ.) 1500. նոյա մօտ 4 դեսեատնիկներին (120 ակ.) 480. Ձիաւոր դեսեատնիկներին (300 ական) 1200:

ղին եկեալ սփռեցի, տարածեցի, ծաւալեցի, հանգիցէ Ձեր որդւոց և ձեր զաւակների վերայ: Դաւիթ մարգարէն կըսէ Թէ... — որ խորհի զաղքատն եւ զտնանկն յաւուր չարէ փրկէ զնա տէր... Այսպէս վկայութիւններ շատ կան Սբ. գրքի մէջ. երկու օր իրար վրայ օր ըսեմ չի պարպի և դուք ալ կը ձանձրանաք: Ըսելիս այսօր ձեր աստուածսիրութեան մէջ Թապաղներ կուգան. առատօրէն ողորմութիւն շնորհէք, որ երկնից արքայութեան մէջ մասն և բաժին ունենաք և մանաւանդ յաղթէք ձեր հոգւոյ Թշնամի չար և աներևոյթ սատանային, որնոր շատ մարդկան սիրտը կը քարայնէ և տուրք ու ողորմութիւնից կը կարէ: Աստուած հեռի արասցէ ձեզ այդ փորձանքներից ամէն: Ակնուհետև ժողորդի մէջ շրջել են 8 Թաբաղներ զանազան անուններով: Տէր հօր քարոզը այնքան իմաստալից եւ ազդու էր, որ յիշեալ Թաբաղները իւրաքանչիւրը երեսուն կոպէկ արդիւնքով վերադարձել են եկեղեցւոյ խորանը......

Բնութեան հետ արթնացաւ մեր քաղաքային վարչութիւնն էլ. զեկուցումն, ծրագիր և տեսակ տեսակ գրքեր տպեցին, քաղաքիս համար հոգսեր քաշեցին և իրաւասուններին վաղ բաժանեցին, նրանց խելք սովրացրին և իրանց դէմ կռուի զէնքեր նրանց պատրաստել տուեցին: Բայց ամէնից շատ և խորին քննութեանց առարկայ դարձաւ պահապանների հարցը...... մէկը մէկ է ասում, միւսը նորա հետ համաձայն չէ ու իւր առանձին կարծիքն է գրում.· ... էս է ամէն բան քաղաքում գրատուեցաւ, որ այդ մէկ հարցի վերայ այդքան չալիչ եկան... բայց մէջից ինչ է դուրս գալիս, էն, որ երկու կողմից էլ համոզմունք կայ, որ այս բոլէիս պահապանին յարմար մենք մարդիկ չունինք: Մէկ կողմը Նորաձևութիւն սիրելով, փորձի համար, կամենում է մի քանի տեղերում պահապաններ ունենալ. միւսը դրան հակառակ է...... երկու կողմիցն էլ արդար են՝ ինչ որ չըկայ ինչ փորձել. Թէև էլ չըկայ, ամա ինչպէս Նորաձևութիւն պէտք է գործ դնենք և մարդիկ սանձենք... Զէ որ մարդս Նորաձևութեան մէջ շատ Թուլամիտ է...

Եթէ այս վերջինների միտքն է քաղաքի տները պահապաններով ապահովելու մասին հոգալ, բաս ինչ գէթ են արել մեր եկեղեցիները, որ Նրանից ապահովութեան մասին չեն մտածում ու նրանց վերայ հաւատարիմ պահապաններ չեն կարգում... Սբ. Նշան եկեղեցւոյ օրինակը մեզ լաւ համոզեց, որ եկեղեցին մէնակ երեցփոխանի և մահտեսու պատով անկարելի է Թողնել.... Ախար, ո՞ւր կորան եկեղեցւոյ ոսկեղէն իրեղէնները...... Ոչ եկեղեցւոյ դուռը կոտրած տեսան, ոչ պահարանի բանալին ու ոչ իսկ խորանը......... բայց ո՞վ Թըլացրուց այնտեղից այդ իրեղէնները...... Հալբաթ սատանան ...... Սատանայ ու խաչ ու այն էլ բաշաղու ոսկեայ խաչ...... Եւ այս իմ կարծիքը շատ հաւանական է, խնդրում եմ և սորան հաւատալ...... Ախար մեծ պատիւ մեր քահանաները իւրեանց քարոզների մէջ այնքան յիշեցին սատանայի անունը, որ վերջապէս տեղից շարժեցին այդ խեղճ արարածին՝ նրան դուրս հանեցին տարտարոսից և նա էլ միամիտ եկաւ մեր աշխարհ և ուղղակի պլզեց Սբ. Նշան եկեղեցւոյ խորանի մէջ......... Թէ ինչ կանէ սատանէն այդ ոսկիների հետ, դու ինքդ լաւ գիտես, ընթերցող, Թէ կնիկ ունէ հարամզադէն, հէյտի ֆօրմայր ու շլթաներ կուշինէ այդ ոսկիներից Նրա համար, որ ձեր հաւնած...... ով գիտի կարելի է, որ հենց այդ Սբ. Նշան եկեղեցի զըկէ նրան այդ զուքայով այնտեղի երեցփոխանի սիրտը տրաքացնելու... Ի՞նչ զարմանալի բան է. քիչ ենք տեսնում մեր կնիկներից վզի ու գօտի վերայ նրանց մարդկերանց զօդած ակնեղէններ. հենց այդ եկեղեցում, ով գիտէ, լինին էլ այդպիսիներ....

Սբ. Նշան եկեղեցին միայն այդ իրեղէնները կորցրուց, բայց Բէթղեհէմ եկեղեցւոյ ծուխը նրանից պակաս կորուստ չը կրեց...... Ահա երեք տարի է ընթերցող, որ փակուած է այնտեղի ծխական ուսումնարանը. այն Թաղի երեխայքը երեք տարի է զուրկ են մայրենի լեզու ուսանելուց. և ինչու, ասում են փող չը կայ...... Հայոց ազգը փող չունէ ուսումնարանաց համար, զարմանալի չէ այս, ընթերցող ...... Չէ, չենք հաւատում, Հայի գրպանում միշտ փող կը գտնուի, երբ նա իրան ցոյց տալ ուզենայ: Բաս Թող այնտեղի երեցփոխանը այդ կրքով շարժուի և ուսումնարանին մէկ զարման շնորհի........... Սբ. Նշան եկեղեցւոյ կորած խաչերը մի ժամանակ կարող են կանանց ղուքսերի ձևափոխուել, բայց Բէթղեհէմի ուսումնարանի զրկեալ աշկերտքը դրանից չեն շահուել, ինչպէս էլ որ չը շահուեցաւ Վըլադիկավկազի ուսումնարանը Վահան վարդապետի այցելութիւնից: Չը շահուեցաւ, որովհետև ուսումնարանի աշակերտը դարձեալ մնաց բոբիկ և ոչ ոք չը տուաւ նրա համար կօշիկ, բայց Վըլադիկավկազցիք տեսած լինելով Հայր Բասամեանցի դպրոցում, Սբ. Գայեանեան վանքում, ոչ Թէ աշակերտաց միայն, այլ և վարժապետին ոտաբաց, ու կրունկներ ծակած չարուխներ հագած, չեն ուզում հաւատալ Հայր սուրբի խօսքին, Թէ հարկաւոր է ոտի մերկութիւնը ծածկել: Էլ ինչ հոգս է քաշել վարդապետը Վլադիկավկասում. այնտեղի քահանայքն երկու տիրացուներով օրօր է տան ամէն բնակիչների մէջ, քարոզ խօսելու համեցէք արել. քարոզից յետոյ փառաւոր կերպով ինչքն է վիճում տան եկեղ: Եւ երբ անքաղաքավարի վլադիկավկասցիք վիլայս չեն արել նրան, Հայր սուրբս գժգոհ է մնացել, շատ հաւանական մի լաւ պատճառաւ, որ չամաղանը լի իւր «Պերպլագյներով» յետ է բերել և տարել վանքը, ճանապարհին այնտեղի քահանայից ստացած դատը միշտ կրկնելով, Թէ խաբար, ճախրակապործ հայոց բաւերն՝ են համապատասխան Ռուսաց «Токарь»-ին...

Մեր ազգային ուսումնարաններն առհասարակ վիճակուել են կամ շատ այցելութիւններ ունենալու, կամ բոլորովին միայնու անյայտութեան մէջ, մինչև անգամ պաշտօնական անձանց համար: Ես խնդրում եմ Երևանու վիճակի Հայոց Թեմական վերատեսչից հաղորդել ինձ փէլիստոնիս համար, Թէ նրան յանձնուած վիճակում, ո՞րքան ուսումնարան կայ, ո՞րքան ուսանողք են այդ ուսումնարաններում և ինչ գրութեան մէջ են դոքա: Դուք կարելի է ասէք Թէ նա պարտական չէ այդ իմանալու... Տէրը նրան և մեր եկեղեցիների բոլոր երեցփոխաններին պահէ և պահպանէ սատանայի ամենայն փորձութիւններից. Թող Երևանու Թեմական վերատեսչը իւր անձնական գործերից ազատուած միայն այցելէ իւրեան յանձնուած ուսումնարաններին և երեցփոխանները խնձեն իւրեանց հաշիւները և յամառեն նրանց տալում. ինչպէս անում է Թիֆլիսի բերդի Սբ. Գէորգ եկեղեցւոյ երեցփոխանը... Թող ինչ ուզեն անեն. ինձ ինչ փոյթ չէ, երբ ում հարկն է դրա մասին հոգալու, չէ կատարում իւր պարտականութիւնը:

Եթէ խօսենք պարտականութեանց մասին մենք կարող ենք համնել վերին աստիճանի անպարտականութեանը: Ի՞նչ պարտական եմ, զօր օրինակ, պահանջել Աժդարխանի հասարակութիւնից, որ նա մեզ խոստանում է Թէ նա ինչ հանգամանքից ստիպուած հաստատեց աղքատաց գանձարան առանց Հոգևոր տիրոջ ա՞ռաջադրյն օրհնութեան: Կամ ինչ հարկն է ինձ ստիպում հարցնել Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձուներից և ուսուցիչներից, Թէ ինչու նոքա չեն լինում տարին մէկ անգամ կատարուած նրանց ուսումնարանի բարերարների հոգեհանգստեան տօնի հանդէսին և այլն և այլն: Եթէ մենք այսպիսի պարտականութեանց ետևից վազենք, ո՞ւր կերթայ, կարելի է որ էլ նոր մէկանց աչքս տանենք մեր սրտի ցաւերն ու զարգերը և դրանով էլի նոր խոստանած շատ մեղքեր գործեմ...... երբ մենք ամէնքս լաւ հիմի հասկացանք, որ ոչ ոք ուշք չէ դարձնում մեր ազգի ցաւերի և զարգերի վերայ: Ո՞վ է մեզ հետ կարեկից, ընթերցող՝ այդ ցաւերին, տարաբաղդաբար ոչ ոք............ մենք ենք միայն մնացել ամէնի համար ցաւող դարդ քաշող, մեզ է միայն վիճակուել ամենայն ազգային ցաւն ու դառն կսկիծը մեր սրտին մօտ զգալ ու Նրանց համար անվերջ չարչարուել և ամենայն տեսակ զրկանքներ տանել. Էլ ինչ Հայութիւն, էլ ինչ ազգութիւն, մեր Հայերի բերանում ոչինչ են դոքա............' Այդ ոչինչ է, որ բան է դատում...... Այս յուսով պառուեք. այդ յուսով էլ կը ծերանայ և ձեր

Քաղքցին

Գնահատող յանձնաժողովի շտատը կըհաղորդենք միւս անգամ:

Բ. նստում որոշվեցաւ կառավարութիւնից նշանակված անդամի հարցը այնպէս, որ նա պէտք է մասնակցէ խնամակալութեան գործերին, բայց առանց ռոճիկի, որովհետև նա ստանում էր ռոճիկ ոչ իբրև խնամակալութեան անդամ, այլ որպէս վարչութեան անդամ: Բացի դրանից երբ պարապ է վարչութեան անդամի պաշտօնը, պարապ է անշուշտ և նորա ռոճիկը:

Վարչութեան շտատի մէջ նշանակուած էր և երկրաչափի և ճարտարապետի, որ խորհուրդը մերժեց, ասելով թէ շինութեանց բաժանմանը քաղաքը փող է տալիս և մեծ փող՝ 8 հազար ռ. ապա ինչու ուրեմն և քաղաքային երկրաչափ կամ ճարտարապետ առանձին ունենանք, քանի որ իրաւունք ունինք պահանջելու շինութեան բաժանմունքից իւր երկրաչափը և ճարտարապետը քաղաքի գործերի համար բանեցնելու:

«Новости» լրագիրը, ինչպէս լսւր հաղորդում է, որ Պետերբուրգի համալսարանի կառավարիչը Թոյլտուութիւն է տուել ուսանողներին կազմելու ուսանողական նպաստատու գանձարան, ուր մասնակիցները պարտաւորած կը լինին ներկայացնել 2 ռ. և որից փող փոխառնելը սահմանափակված է 50 ռ. Մասնակիցները... համալսարանից դուրս գնալիս, կարող են ստանալ գանձարանից իւրանց դրած գումարը, որից միայն յօդուտ այդ հաստատութեան պահանջվում է շատ չնչին տոկոս:

«Биржа» լրագրի խօսքերով Եղբարց Ալթունճեանների առևտրական տունը, որ առաջին առևտրական տունն էր Թէոդոսիայում և որ ունէր երկու մեծ տներ և առաջին Ջրաղացը Ղրիմի Թերակղզում, մնանկացել է: Նորա պասիվը այս այժմ յայտնի չէ, բայց ասում են թէ շատ տխրալի է: Այս անակնկալ դէպքը վնասելու է շատ աղքատ անձանց, որոնք պ. պ. Ալթունճեաններին յանձնել էին իւրեանց գումարները և կը մնանկացնէ մի քանի հայ առևտրական տներ, որովհետև պ. պ. Ալթունճեանները, մեծ վարկ ունենալով, վերցրել են նոցանից մուրհակներ բանկերի մէջ զեղջելու համար: Նոքա ինչպէս ասում են, ստացած են և Թիֆլիսի առևտրական բանկայից 30,000 ռ. Ցոլհանսկու Անանեանցի յորդորմամբ:

Անցեալ չորեք երեկոյեան Թիֆլիսում յորդ անձրև հետ եկաւ և այնքան կարկուտ, որ փողոցներն և տանց սանդուղները ծածկուեցան նորանով. բայց բարեբաղդաբար կարկուտի հատիկները մանր էին:

Ամսոյս 7-ին, առաւօտեան Մուշտայիդ անվանեալ պարտիզի պաւիլիօնը հրոյ ճարակ է դառել: Հրդեհի պատճառը անյայտ է:

Ամսոյս 3-ին Թիֆլիսի դատաստանական ատեանում քննվեցաւ Լազարեանցի գործը Բաւարդեանի քարվանսարայի հրդեհի մասին: Ատեանը հաստատեց Նահանգական դատարանի վճիռը:

Պարոն Ց. Պ. Ալէքսանդրապոլից հաղորդում է, որ այս երկրորդ տարին է, որ արքունական հաղաչափով կորուած հողերն քաղաքի համար արօտատեղի էին արած. բայց այս տարի մի քանի ագաների շնորհօք սկսել են կրկին արօտատեղիները ցանել և այս խոր է նոցա նպատակը, որովհետև իրանց ունեցած բոստանների էլ իրանց ձեռքը կը մնայ, երբ երկրորդ դասը արօտ ցանէ:

Պ. Խ. Մ. հաղորդում է Բաղուից, որ մեծ. պ. Խ. Ն. Քանանեանցը համեղխաւոր կերպով իւր հօր հոգեհանգստեան կատարել տալից յետ, պատրաստում է սուրբ սեղան, ուր հրաւիրում է իւր բարեկամներին և քաղաքի նշանաւոր բնակիչներին. բայց ցանկանալով այս սեղանին մասնակից անել և աղքատներին, նուիրում է յօդուտ աղքատաց արկղին մի նշանաւոր գումար: Սորա օրինակին հետևում է և պ. Ց. Աւանովը:

Թիֆլիսում նորերումս Հավլաբարի կամուրջի մօտի բաղնիքը 10—15 հոգի այրի մէյդանում Թուրքերից պանիր են առնում և տանում են խորոտ հետ րամանում, բաժանելուց յետոյ յայտնի բան է պանիրներից ուտում են և մի քանի րոպէից յետոյ նոքա սաստիկ հիւանդանում են ինչպէս խօլերայից, սկսում են բերաններից Թափել, իսկ նոցա ընկերները սկսում են ջուր ածել և մածուն խմացնել և բժիշկներ բերել պօլիցեականների հետ, բայց յայտնի չէ մեզ թէ ինչ դրութեան մէջ են այժմ հիւանդները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

Մօտ ժամանակներում Բէլլեւեան արուարձանում հասարակապետականներից մի ժողով կազմվեցաւ Բլանշէի տանը, ուր հրաւիրվեցան մինչև 2000 հոգի: Բլանշէն ժողովը բացեց մի համառօտ ատենաբանութեամբ, որի մէջ յայտնեց թէ 20-դ բաժնի ժողովրդապետական կուսակցութիւնը յայտնում է Ազգային ժողովին բոլորանուէր համակրութիւն նորա վերջին վճռի համար, որի զօրութեամբ նոր սահմանադրութիւն հիմնվեցաւ, որ մերժեց տապալել անորոշ դրութիւնը: „Այդ խրոխտութիւնը, պարոն պատգամաւորներ, ասաց ատենաբանը, պարտաւորութիւն է դնում ձեզ վերայ յայտնելու ձեր անկեղծ շնորհակալութիւնը նոր բազմութեան բոլոր խմբերին առանց բացառութեան, որովհետև նոքա հաւասար չափով օգնեցին այդ ազգասիրական գործը առաջ տանելուն“: Այդ տեսակ խօսքերը, որ առաջին անգամ էին արտասանվում ծայրահեղ հասարակապետականի բերանից, ստացան բարձրաղոչ միաձայն համակրութիւն ժողովի կողմից: Նորանից յետոյ խօսեց Գամբետան: Սա ջերմ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց ատենաբանին, որի խօսքերը լինելով Մենիլմօնտանի, Բէլվիլի և Շարոնի ընտրողների արտայայտութիւն, անհերքելի կերպով ապացուցանում են, որ միաձայնութիւնը և փոխադարձ հաւատարմութիւնը շարունակվում են ժողովրդապետական կուսակցութեան բոլոր խմբերի մէջ, նոյնպէս և այն երեսփոխանների և իւրեանց ընտրողների մէջ, որ հաստատեցին սահմանադրութիւնը: „Այդ ամենալաւ վարձատրութիւնն է, շարունակեց ատենաբանը, այն դժուարակիր աշխատութեան համար, որ մենք կրեցինք վերջին ժամանակ: Դորա հետ միասին և երկիրը ձեռք կբերէ իւր վարձատրութիւնը իւր յոյսերի և ցանկութիւնների կատարմամբ մերձ ապագայում: Որքան մենք աւելի ենք մօտենում մեր նպատակին, այնքան պէտք է չափաւորութեամբ և զգուշութեամբ ներգործենք: Մենք պէտք է համբերութիւն ունենանք, որպէս զի չը ջնջէն մեր այդպիսի դժուարութեամբ ձեռք բերած յաջողութիւնը: Դորանից յետոյ ատենաբանը պատմեց ունկնդիրներին ծերակոյտի օրէնքի գլխաւոր հիմունքը, ցոյց տալով իւրեան այդ հիմնարկութեան կողմնակից, որ ինչպէս ինքը յոյս ունի, փոքր օգուտ չի բերիլ Ֆրանսիայի ժողովրդապետական սկզբունքին: „Միայն հարկաւոր է, աւելացրեց Գամբետան, որ ժողովրդապետական կուսակցութիւնը իւր բոլոր ուժով աշխատէ գրաւելու այդ բերդը իւրեան անձնատուր բերդապահ դնելով: Դուք կարող էք այդ նպատակին հասնել, եթէ որ ձեր նշանաբան ընդունէք հետևեալ առածը, „Օգնիր քեզ և ընտրողները կօգնեն քեզ“: Յետոյ Գամբետան իւր ճառի մէջ անցաւ դէպի այն հարցերը, որոնք վերաբերում էին Ֆրանսիայի և Եւրոպայի քաղաքական դրութեան, ուր նա խօսեց յօդուտ այն կարգադրութիւնների, որ վնասակար չէին կրօնին, բայց միևնոյն ժամանակ ազատ են կրօնական կռիւներից: Արմատական յեղափոխական կուսակցութեան առաջնորդի ճառը մեծ ներգործութիւն գործեց: Գամբետան, կարելի է ասել, հասաւ իւր այն նպատակին, որ որոշել էր՝ այն է համոզել իւր արմատական յեղափոխական ընտրողներին, թէ ինչպէս ինքը նոյնպէս և իւր համախոհները ամենից առաջ աչքի առաջ ունէին հայրենեաց շահերը, իւրեանց ձայնը տալով յօդուտ „պաշտպանողական“ հասարակապետութեան: Նա արտայայտեց թէ ծայրահեղ ձախակողմեանք մազի չափ անգամ չեն շեղվել իւրեանց սկզբունքից և պահպանել են նոցա անփոփոխ:

Այդ խօսքերով կարծես Գամբետան կամենում էր արդարացնել իւր վարմունքը սահմանադրական օրէնքների քննութեան ժամանակ, որի նպատակն էր ապահովել հասարակական և քաղաքական հիմնարկութեան վերջնական յաղթութիւնը: Վերոյիշեալ խօսքերը անկասկած առիթ կտան հասարակապետութեան համար անձեռնտու եզրակացութեանց հակահասարակապետականների կողմից: Ձախակողմեան և մանաւանդ աջակողմեան կենդրոնը անկարելի կհամարեն միանալու պահպանողական հասարակապետութեան խակական նշանակութեան այդ տեսակ մեկնութեան հետ, որ Գամբետայի նախադծին համաձայն ներգործեն միասին: Ֆրանսիայի քաղաքական դրութեան մասին ուրիշ տէրութեանց վերաբերութեամբ, Գամբետան բաւականացաւ մի քանի ակնարկութիւններով, չը կամենալով կարծես զգուշութիւնից աւելի ընդարձակ բացատրութիւններ տալու: Նոյն զգուշութիւնը երևում է և նորա ճառի այն մասում, ուր նա խօսեց հարևանցի կերպով եկեղեցու և տէրութեան յարաբերութեան մասին: Ինչպէս արմատականութեան գլուխ Գամբետան պարտական էր իւր արմատական կուսակից ունկնդիրների առաջ հարևանցի կերպով խօսելու խղճի, ազատութեան և եկեղեցու բաժանման մասին կառավարութիւնից: Նա իւրեան յայտնեց կողմնակից աշխարհական կառավարութեան: Բայց ինչ որ նա այդ մասին խօսեց, զանազանվում էին նորա առաջվայ ճառերից: Կարծում են թէ այս անգամ իւրեան զսպում էր այն պատճառով, որ իւրեան չը մեղադրեն թէ նա համակրում է Բիսմարկի հալածանքներին:

Նորերումս Լօնդօնի Վէստմինստերի նախերեց դօքտոր Ստէնլէյն քարոզ է կարդացել կրօնի, գիտութեան և գրականութեան վերաբերութեամբ: Այս քարոզը այնքան արժանաւոր է, որ մենք հարկաւոր ենք համարում քաղել սորա մասին Indep. Belge լրագրից նորա բովանդակութիւնը: Հռչակաւոր ատենաբանը, ասում է այդ լրագրի Լօնդօնի Թղթակիցը, արեց համարձակ համեմատութիւն երեք երևելի մարդկանց մէջ՝ Կալվինի, Գալիլէի և Շէքսպիրի, ցոյց տալու թէ մարդկութիւնը ինչ յառաջադիմութեան համար պարտաւորէ այս անձանց՝ Աստուածաբանութեան, գիտութեան և գրականութեան վերաբերութեամբ: Կալվինի մասին, որ կոչվեցաւ վերանորոգութեան Աստուածաբան, նա գովեց Ժէնէվա քաղաքը, որ էր վերջին երկու դարերի ժամանակ և այժմ էլ Եւրոպայի մտաւոր քաղաքներից մէկը, նեղեալների ապաստարան է և արդարութեան ու ազատ մտքի դպրոց:

Նոյն իսկ տարին, երբ մեռաւ Կալվին (1564), Գալիլէյն հայր աստղաբաշխութեան և Շէքսպիրը մարդկութեան բոլոր հասակների Թարգմանը լոյս աշխարհ եկան: Գալիլէյն ենք պարտական մեր գիտութեամբը աստղերի, երկրի արեգակի հետ յարաբերութեան, տարածութեան, հեռաւորութեան և այլ անհամար երկնային մարմինների շարժողութեան մասին: Հաստատելով մեր առաջ հեռաւորութեան անսահմանութիւնը, նա հաստատեց և տիեզերքի և աստուածութեան անսահմանութիւնը: Նա ծանօթացրեց մեզ այն կարգի, մտքի բարձր կամքի հետ, որ կառավարում են տիեզերքը. նա հիմնեց գիտութեան ճշմարտութիւնը, ինչպէս որ Կալվինը հաստատեց աստուածաբանական ճշմարտութիւնը: Երբ Գալիլէյն մեռաւ, Նիւտօն առաջ եկաւ. նորա մէջ անցել էր այն մեծ հոգին, որ թոյլ տուեց համարձակ յաղթելու նախապաշարմանց: Նա վերականգնեց մեր գաղափարը տիեզերքի և Աստուածութեան մասին այն կէտի վերայ, որին մենք առաջ հասած չէինք: Մինչև այժմ կարծում էին, որ Աստուածաշունչը միայն տալիս է մեզ վերին վկայութիւն նորա մասին, որ ներկայացնում է բնագիտութիւնը. այն ժամանակ ենթադրում էին, որ բոլոր քննութիւնները որ ամբողջապէս չեն համեմատ Սուրբ Գրքի հետ հակառակ էին ճշմարիտ կրօնին. Գալիլէյի գիւտերը մեզ ցոյց տուին, որ Աստուածաշունչի մի քանի տեսութիւնքը անճիշդ եղան, բայց դորանից Աստուածաշունչը ոչինչ չը կորցրեց:

Եթէ Աստուածաշունչը, ասաց արժանապատիւ նախերեցը, մեզ ուսուցանում է ճանաչել մարդկային հոգի, մենք պէտք է գործածենք Շէքսպիրի մէջ այն մտքին, սրտին, կրքին, որ պարզել է նա իւր արարածներին: Մեր բոլոր երևելի բանաստեղծները են ամենալաւ աստուածաբաններն և Շէքսպիրն էլ բոլորեցունց պարագլուխն է. նա նկարագրեց Օթէլլօի նախանձը, Մակբէթի մտքի փառասիրութիւնը, Վէնետիկի վաճառականի մեծահոգութիւնը, ապէկօծութեան մէջ անմեղութիւնն և մաքրութիւն, Հէնրի VI մէջ հայրենասիրութիւնը, Համլէտի մէջ խանգարեալ հոգւոյ երկբայութիւնը. նա թողեց կրօնական աշխարհին աւելի լաւ դասեր, քան թէ կարող էին տալ հազարաւոր քարոզիչները, որովհետև նա դոցա արտայայտեց այնպիսի համոզեցուցիչ և գեղեցիկ լեզուով, որ հասկանալի եղաւ հազարաւոր անձանց և այնպէս դիւրըմբռնելի, որ ոչ քարոզներ և ոչ աստուածաբանական ճառերը կարող չէին նորանց այնպէս շարժել: Ով կհամարձակվի ասել, որ Շէքսպիրի երկասիրութիւնքը կրօնական չեն այս խօսքի ամենաբարձր նշանակութեամբ: Որովհետև մենք իմանում ենք կրօնից այն ամենայն բան, ինչ որ տալիս է մեզ Աստուծոյ բնութեան մասին ամենաբարձր և ընդարձակ գաղափարն և ամենազեղեցիկ կերպիւ նկարել է տալիս մեզ մարդոյ բնութիւնը: Ով էր նա. կաթոլիկ կամ բողոքական, կալվինական թէ Հայ. մենք աշխատում ենք այդ իմանալու, բայց ի զուր. մենք միայն իմանում ենք, որ նա ամուսնացած էր և թաղուած է Շտրասֆորդ սիւր Ավօն եկեղեցում և սորանից մենք եզրակացնում ենք, որ նա երևի պատկանում էր ազգային եկեղեցուն: Եւ այսպէս ահա նկատելով և ուսումնասիրելով բնութիւնը մենք ձեռք ենք բերում սէր դէպի նմանները և ամենակենդանի հաւատ դէպի Աստուած: Այս երեք երևելի մարդիկ՝ Կալվին, Գալիլէի և Շէքսպիր մեզ տուին լոյս և ճշմարտութիւն և ինչոր նոքա մեզ ուսուցին կրօնի, գիտութեան և մարդու մասին, մեզ դարձրին լաւագոյն և նպաստեցին մեզ առնելու անչափ յառաջադիմութիւն:

Փարիզի գիտութեանց ճեմարանում պարոն Գաստօն Թիսանդիէրը զեկուցումն էր արել ջինիթի հետ պատահած աղետալի անցքի մասին, որ Մեղուի անցեալ համարում հաղորդած էինք Վիէննայից ստացած նամակի մէջ:

Պ. Թիսանդիէրը մեծ խռովութեամբ պատմեց իւր երկու ընկերների մահուան մասին: Նա յայտնել է ճեմարանին լրիւ տեղեկութիւն այն փորձի մասին, որ նա կարողացել էր անել այդ դժբաղդ բարձրանալու ժամանակ:

Մինչև նոցա ուշաթափ լինելը, օդային ճանապարհորդները ստուգում էին իւրեանց շնչերակի (պուլս) դրութիւնը:

Կրօչէլի շնչերակը զարկում էր 74—85, Սիվէլինը 76—86, Թիսանդիէրինը 70—80. Յետոյ նա պատմեց հետևեալը մթնոլորտի մասին.

Մթնոլորտը, ասաց նա, Ապրիլի 15-ին ներկայացնում էր մի առանձին դրութիւն. Նա կարծես լի էր խիստ անոսր սառցի շիղերով, որոց ներկայութեան մասին անկարելի էր մտածել գետնի մակերևոյթի վերայ, որովհետև երկինքը կապոյտ էր և անքիծ, բայց վերևից ներքև աչք ձգելիս, նոքա նշմարվում էին թանձրախիտ դէպի հորիզոնը.

7,000 մետր բարձրութեան, նաւակը շրջապատած էր փետրաձև ամպերի մի ընդարձակ շրջանով, որոնք ներկայացնում էին պինդ և բիւրեղացուցած զանգուածի կերպարանք. Այս ամպերը նման էին ծաւալած մանրաթելերին, որոց մակերևոյթի վերայ երևում էին հարթ բարձրութիւններ. Օդապարիկի տակից դեռ ևս կարելի էր նշմարել գետինը, բայց երևում էր միայն նորա աղօտ մակերևոյթը, որ կարծես թէ նման էր մի ընդարձակ գլանակի հիման, սահմանափակուած ներքին կողմից օպալեան խաւերով, և վերևը փետրակերպ ամպերով. 7,500 մետր բարձրութեան երկինքը վերին կարգերում, երևում էր ինձ իւր սովորական կապոյտ գոյնով.»

Վերջացնելով իւր խօսքը, նա ասաց թէ, նորա կարծիքով, մթնոլորտի այդ ճնշումն էր, որ սպանեց երկու ընկերօջ. Ճեմարանը կազմել է յանձնաժողով մի քանի գիտնականներից, որոնք պէտք է ուսումնասիրեն այդ դիպուածը.

Վեց Անգղիացիներից բաղկացած ճանապարհորդների մի ընկերութիւն գալիս է անցեալ մարտ ամսին մի Ռուս շոգենաւով Բէյրութ. մաքսատանը նորանց արկղներն և սնդուկները քննելուց և ոչինչ չը գտնելուց յետոյ, որոց համար հարկ պէտք էր տալ, ընծայ են պահանջում. Անգլիացիք բացասում են. այս պատճառով մաքսապետը յայտնում է, որ ընկերութեան անդամներից մէկը, տիկին Եզեկիէլը պէտք է քննվի. դուցէ նա իւր շորերի մէջ թաքցրած բան ունենայ: Թէպէտ այս տիկնի ամուսինը բողոքում է այս պահանջման դէմ, բայց ի զուր. կանչում են մի կին և քննութիւնը անում են ոչ թէ մի առանձին սենեակում, այլ ընդհանուր սենեակում ողջ ճանապարհորդների առաջև և այն էլ ամենաանվայել ձևով, յայտնի բան է, ոչինչ չէ գտնվում. Տիկնօջ ամուսինը յայտնում է այս անցքը Անգղիացւոց հիւպատոսին, որն որ իսկոյն գանգատ է մատուցանում Ռուստամ փաշային, որ նոյն միջոցին դեռ այնտեղ էր. Փաշան մաքսապետին արձակում է պաշտօնից նա մանաւանդ, որ նա վաղուց յայտնի էր իւր կոպտութիւններով. Եթէ մի Անգղիացու հետ այս էր անում, որոց կառավարութիւնը աւելի պէտք նայում է, որ իւր հպատակների մի մազին էլ չը կարողանան դիպչել, ինչ կը լինի տաճկահպատակների դրութիւնը.

Մարտի 1-ին Հալէպից գրում են Allg. Zeit. լրագրին. Երբ սարսափելիութիւնը գալիս է, ասում է արաբացին, նա երբէք մէկ հարուածով չէ վերջանում, նա միշտ երեք հարուածք է անում, այսպէս էլ եղաւ այս անգամ այստեղ. Հազիւ թէ ծաղկի հիւանդութիւնը, որին շատերը զոհ եղան, վերջացել էր, որ երևցան բազմաթիւ աւազակների խումբեր, որոնք իրանց յանդուգն ասպատակութիւններով քաղաքի մէջ ահ ու դող էին գցել, որոնց դէմ նախկին ծերունի և թոյլ փաշան ոչինչ չէր կարողանում անել. Երրորդ հարուածն էլ դեռ մնացած է, որ մի քանի օր առաջ քաղաքին և մանաւանդ նորա հարաւային մասին մեծ վնասներ տուեց և աւելի ևս վնաս կտար եթէ նոր կուսակալը Հասան Սամի փաշան, որն որ վերջին ինը ամսումը չորրորդ կուսակալն է, ամեն միջոց գործ չը դնէր կատաղած տարրի առաջն առնելու համար.

Վերջին փաշայի գալից յետոյ, որ, օսմանցիների սովորութեան հակառակ, ցերեկով հանդէսով երաժիշտներով և թնդանօթների ձայնիւ քաղաք մանելու փոխանակ, գիշերով լուռ ու մունջ մտաւ քաղաք, աւազակներն և դողեր, իրանց գործունէութիւնը դադարեցրել են, տեսնելով որ սա սովորական փաշաների նման չէ, որ և ապացուցեց մի քանի կարգադրութիւններով. Ցանկանում ենք որ գոնեայ նորան յաջողի Ալէքսանդրէտից մինչև Հալէպ սկսուած կառքի ճանապարհը վերջացնել, որ մինչև այժմ հազարաւոր լիրաներ կուլ է տուել, բայց վերջանալուց շատ հեռու է. Եթէ այս ճանապարհը շուտով չը վերջանայ քաղաքի առևտուրն ու նորա հարստութիւնը կոչնչանայ.

«Allg. Zeit.» լրագրում կարդում ենք. «Վերջին տարիներում Տաճկաստանի կառավարութիւնից ընդունուած կանոնադրութիւնը ծխախոտի արտադրութեան և առևտուրի մասին պահանջում են դառնալ այս արտադրութեան սերտաւոր կերպով պակասելուն։ Կառավարութիւնը տեսնելով այս կանոնադրութեան վնասները նշանակել էր մի մասնաժողով այն քննելու և ծխախոտի արտադրութեան առաջադիմութեան միջոցներ որոնելու համար։ Ինչպէս այժմ երևում է, մասնաժողովը երկար ժամանակից յետոյ վերջացրել է իր գործունէութիւնը, բայց բնաւ չէ բարւոքել այդ նշանաւոր արտադրութեան դրութիւնը։

Մինչդեռ այս օգտաւէտ արտադրութիւնը ձեռնտու կանոնների պատճառաւ յառաջադիմութեան մէջ է Տաճկաստանում, Ջինացիք սկսել են պարապել Տաճկական ծխախոտ մշակելով և այժմ շատ երկիրներում Տաճկական ծխախոտի անունով ծախում են Ջինաստանի ծխախոտ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Գ. Ց. Գ. գրում է մեզ Ալէքսանդրապօլից. Մեր քաղաքում սովորութիւն է ամեն տարի զատկի օրը բոլոր քաղաքով մատաղ անել և ամեն տուն բաժանել, թէպէտ շատ մարդիկ խօսացին այդ բանի վրայ թէ լաւ կը լինէր, որ այդ բաւական գումարը (400—1000 ռուբլի կը հաշուի տարուայ աջողութեան համեմատ) մի բարի նպատակի ծառայեցնենք, քան թէ մէկ ժամուայ կերակուր անենք։ Բայց հընար չէ եղել մեզ մատաղից յետ կասեցնել, բայց թէ ինչ դեր են խաղում մատաղի փայ անողները, Աստուած ազատէ, ինչպէս այս տարի պարոն Տիգրանովեանց Թաղի մատաղի վեքալացուների մէջ ծագած վէճը ողջ քաղաքին յայտնի եղաւ մատաղը վերջացնելուց յետոյ և շատ մարդ զղջաց իրեն տուած փողերին, և կարելի է այսուհետև էլ մատաղ չանեն, բայց էլի մատաղը իւր անձնուրաց պաշտպաններն ունի։

—

Լէյպցիգից գրում է մեզ պ. Բահաթուրեանը, որ Ապրիլի 15-ին Հիւպշման անուն երիտասարդ Գերմանացին, որ երկու տարի է գընացել էր Վիեննայի Հայերէն լեզուն ուսումնասիրելու, վերադառնալով Լէյպցիգ կարգացել է այնտեղի համալսարանի մէջ իւր առաջին դասախօսութիւնը։ Մինչև 50 գերմանացի ուսանող երիտասարդներ և 10 ալեզարդ պրօֆեսօրներ լցուած էին լսարանը։ Նրա դասախօսութեան նիւթն էր հաստատել Հայոց լեզուի հնդկաեւրոպական լինելը։ Մեծ հմտութեամբ պատմի հայազնը ապացուցեց այդ և արժանացաւ երկարատև ծափահարութեանց։ Հայերէն արտասանութիւնը պարզ էր, բայց Վիեննայեցւոց պէս նա գ հնչում էր к. ծ — дз և այլն։

—

Ռօզինից հաղորդում են, որ Շէյմ քաղաքի մի վաճառական, որ ընտրուեցաւ երդուեալ դատաւոր, խնդիր է ուղարկել հրաժարեցնելու նորան այդ պարտաւորութիւնից, ասելով թէ նա շատ յիմար է և թէ չի կարող նա հետևել դատաստանական վիճաբանութեանց։ Խորհուրդ ենք տալիս և մեր հասարակական գործերին մասնակցող յիմար անդամներին այդպէս անկեղծօրէն խոստովանել իւրեանց թուլութեանց մէջ... հաւատացած կացէք, որ այն ժամանակ մեր գործերը դանդաղ չէին ընթանայ։

—

Պետերբուրգի լրագիրներում կարդում ենք, որ ապրիլի 27-ին այնտեղի հոգևոր ճեմարանի դահլիճում պրօֆէսսոր Տրօիցկին պէտք է պաշտպանէր հրապարակաւ աստուածաբանական դօքտորի աստիճան ստանալու համար իւր երկասիրութիւնը հետևեալ վերնագրով՝ Հայոց եկեղեցւոյ հաւատադաւանութիւնը, որ գծագրել էր Ներսէս Շնորհալին աստուածահաճոյ Յաւնաց կայսեր Մանուէլի պահանջմամբ. Պատմական վարդապետական քննութիւն կից Հայոց եկեղեցւոյ և ուղղափառ եկեղեցւոյ միութեան հարցի հետ։

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Էջմիածին. Դ. Գ. Ս. Ձեր բոլոր ուզած գրքերը ձեզ ուղարկեցինք, բացի ցենիաժ Գէնիաթից, որ խմբագրութեանս մէջ չը կայ. սա և հեղինակից ստանալու պէս կուղարկենք։

—

Ագուլիս. Հ. Ե. Տ. Ա. խմբագրութիւնս ստացաւ Ձեզանից անցեալ տարուայ Մեղուի Ձեր պարտքը՝ 7 ռուբլի։

—

Վիւրցբուրգ։ Գ. Կ. Խ. Ձեզանից ստանալիք այս տարուայ Մեղուի վճարը 7 ռ. խմբագրութիւնս ստացաւ Նախիջևանից։

Լէյպցիգ. պ. Ա. Բահաթուրեանին։ Շնորհակալ ենք նամակիդ համար։ Ձեր յօդուածը հաւաքածուների մասին կտպուի առաջիկայ համարում։ Շարունակեցէք մեզ ուղարկել՝ այդ տեսակ հետաքրքիր տեղեկութիւնք, մենք ուրախութեամբ կտպենք այդպիսիքը։

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ 2-ին

Ոսկին (պօլուիմպերիալ)...	5 —	80
Արծաթը (հին մանէթ)...	1 —	14
Հին աբասան. (5 հատը)	1 —	6
Փոխանակագիր Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա...	6 —	55
Փոխանակագիր Պարսկ.	4 —	56
" " անգղիական լիրան.	7 —	20
Լատարիի բիլեթն առաջին	204 —	"
Երկրորդը	197 —	"
Բամբակը Երևանի	4 —	60
Ամերիկ. սերմ.	6 —	60
Տորոնը տեղական	8 —	50
Որդան կարմիր առաջինը	132 —	20
" " Երկրորդն	98 —	30
Մետաքսը Նուխու լաւը.	138 —	"
" " Իմէրեթու	123 —	10
Բուրդը Բուշու	6 —	5
Թարաքամի	3 —	56
Շաքարը ռուսի	8 —	55
Արտասահմանեան	8 —	60
Շաքարաւազը	6 —	85
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	15 —	40
Սամսոնը 10-ից	50ը —	"
Կեօրակի 25-ից	75ը —	"
Բօխչայի 15-ից	55ը —	"
Սուրճը Մօկկոյի	18 —	95
Լեօնց. (հասար.)	17 —	55
Մոմը բնաճարպի (ստէար.)	10 —	25
Ճրագուի	5 —	"
Երկաթը մոդաձև (բրուսկ)	3 —	30
Տախտ. (լիստով.)	2 —	70
Մեխացուն	3 —	20
Ցինկ	5 —	90
Պղինձը անգղիու.	13 —	40
Տեղական	10 —	50
Անագը (կլայեկ)	13 —	40
Անուշադիրը (նիշադ.)	7 —	30
Աղը հասարակ	" —	75
Պղպեղը	11 —	"
Ալիւրը հասարակ	1 —	10
Պետանավի (ջվալը)	18 —	"
Ախվերդովինը 1,	13 —	"
2,	10 —	20
3,	9 —	40
Բրոդսկի ալիւր...	14 —	30
Բրինձը Լանքորանի	2 —	75
Գարին	" —	65
Սպիրտն 83 աստիճանի	6 —	69
Նաւթը	2 —	60
Օճառ (սապոն)	2 —	80
Իւղը	10 —	"
Ձէթը կտաւատի	4 —	"
Կնճիթի (քունջութի)	6 —	40
Շիրն	2 —	45
Գդորն	6 —	75
Արճիճն	2 —	75
Մեղրամոմ	24 —	"
Խունկն	8 —	"
Ձաղն	1 —	40
Վերմիշել եւ մակ. Ռուս.	6 —	40
Օդեսու	5 —	50
Տեղականն	4 —	60
Սագոյ սպիտակն	4 —	50
Գրեչիշնի	2 —	10
Պերլովի	5 —	20
Կրուպայ Մաննիյ	2 —	80
Կրուպչատկան Ա. Բաբաստովինը եւ ընկ. № 1)	13 —	50
№ 2)	9 —	20
№ 3)	7 —	50

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փոստը

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ [illegible] (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր բացի կիրակի օրից։

ԵՐԵՒԱՆ — Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ — Չորեքշաբթի և ուրբաթ.

ՆՈՐԲԱՅԱԶԷԹ — Չորեքշաբթի.

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՑ ԳՏԱՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ — Ամեն օր, բացի կիրակի.

ԶՈՒԳԴԻԴ — Չորեքշաբթի.

ՕԶՈՒՐԳԷԹ — Երկուշաբթի և ուրբաթ.

ԱԽԱԼՑԽԱ — Երկուշաբթի և ուրբաթ.

ԲՈՐՋՈՄ — Երկուշաբթի և ուրբաթ. իսկ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր. բացի կիրակի օրից.

ԲԵԼԻ-ԿԼԻՉ (Ալէքսանդրով.) — Երկուշաբթի և ուրբաթ.

ԲԱՔՈՒ (Ելիզ. [illegible]) — Երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ.

ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ-ԿՈԼՈԴՑԻ ([illegible]) և ԶԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԵԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽ — Երեքշաբթի և շաբաթ.

—

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԹԻՖԼԻԶԻՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 8 ժ. 18 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 1 ժ. 11ր. և ՓՈԹԻ գիշերուայ 11 ժ 27 ր. խառն գնացքը գնում է՝

ԹԻՖԼԻԶԻՑ երեկոյեան 8 ժ. 17 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ առաւօտեան 4 ժ. 30 ր:

ՓՈԹՈՒՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 7 ժ. 38 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 5 ժ. 11ր և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 49 ր.

ԽԱՇՈՒՐԻՑ առաւօտեան 7 ժ. 15 րոպ. և հասնում է ԹԻՖԼԻՍ 3 ժ. 13 ր. ճաշից յետ.

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում՝) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը.

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երեխեկհիւանդների համար գտնվում է Սեմինարիայի դիմացը Ց. Չիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Պատիւ ունիմ յայտնելու պատուելի հասարակութեանը, որ Ախալցխայի և Աքասթումանի մէջ եղած **ԵՂԲԱՐՑ ԱՐԲԱՋԵԱՆՑ** խանութներում կարելի է գտնել արժան գընով ամեն տեսակ գալանտէրէյնի և կոլոնիալնի ապրանք և կօշիկներ։

Այս խանութում վաճառվում են նաև **ՀԱՄԲ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ** գործատան և Թիֆլիսի և Ախալցխայի ծխախոտ և ծխաքարշ։

Բացի այս Եղբարց Արբաջեանց Աքասթումանի խանութում քրեհով են տալիս արժան գնով ապակեայ և յախճապակեայ (փարփոր) անօթներ։

Մամուլի տակից դուրս եկաւ

«Учебникъ Русскаго языка»

(ԴԱՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ)

Ն. Տէր Յակոբեանցի, չորրորդ տպագրութիւն նշանաւոր փոփոխութիւններով և բառարանով։ Գինն է 60 կ. գումարով առնողներին 55 կոպէկ. ամբողջ տպագրութիւնը գտնվում է Վարդանեանցի և ընկ. գրավաճառանոցում, ուր օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

Въ книжный магазинъ Вартанова и К° Въ Тифлисъ.

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՑ

Ապրիլի 21-ին 1875 թ. մինչ փոփոխութիւնը վերցնում է և վճարում է %% հետևեալ քանակութեամբ

Վերցնում է։

1. Փոխատուութիւն տոկոսաբեր թղթադրամների գրաւականով
   ա. Որ վերցնում է թագաւորական բանկայի բաժանումն 6½%
   բ. Որ չէ վերցնում թագաւորական բանկայի բաժանումն . . . 7½%
2. Ապահովեալ ընթացիկ հաշուով
   ա. Ապահոված տոկոսաբեր թըղթադրամներով 7%
   բ. . . . . մուրհակներով . . . 8%
   գ. Ապահոված տոկոսաբեր թըղթադրամներով սոլօ—մուրհակների զեղջման համար 7%
3. Մուրհակների զեղջման համար . . . .
   ա. Մինչև 3 ամիս ժամանակով 7%
   բ. . . . 6 " " . . . 7½%
   գ. . . . 9 " " . . . 8½%
4. Ապրանքների գրաւականով.
   ա. Նոցա համար, որ ուղարկելու են ուրիշ քաղաքներ, կամ այնտեղից բերելու 9%
   բ. Ժամանակաւոր վկայագրերի զեղջման համար, որոնք հիմնուած են, առևտրական կապակցութեանց վերայ 8½%
   գ. Թիֆլիսի ամբարների մէջ եղածների համար . . . . 7%(*)

Վճարում է

1. Աւանդների հասարակ ընթացիկ հաշուով 5%
2. " " ցպահանջ 4%
3. Աւանդների 6 ամիս ժամանակով 5%
4. " " 1 տարուց մինչև 2 տարի ժամանակով 6%
5. Երկու տարից աւել ժամանակով բանկայի վարչութեան համաձայնութեամբ.

Սոլոլակում Նազարեթի փողոցում վարձով է տըրվում Բ. Սիմոնեանի տանը՝ բնակարան ութը սենեակից իւր խոհանոցով. գինն է 600 ռուբլի։

Յուցակ ժամանակից հրապարակական հարցաքննութեանց Թիֆլիզի ծխական դպրոցներում։

Մայիսի
5 } Ճանկոյեան ուսումնարանում Կուկիյ
6 } սբ. Աստուածածնի. եկեղեցւոյ։
7 Հաւլաբարու սբ. Կարապետի ուսումնարանում։
8 Հաւլաբարու սբ. Մինասայ ուսումնարանում։
9 } Հաւլաբարու Մարիամեան ուսումն.
10 }
12 } Սուրբ Գէորգայ կաթողիկէ եկեղեցւոյ տղայոց դպրոցում։
13 }
14 } Նոյն եկեղեցւոյ օրիորդական դըպրոցում։
15 }
16 } Մողնու եկեղեցւոյ տղայոց դպրոյում։
17 }
19 } Նորաշէն սբբ. Աստուածածնայ եկեղեցւոյ տղայոց դպրոցում։
20 }
21 Աւետեաց եկեղեցւոյ. տղ. դպրոցում։
22 } Նոյն եկեղեցւոյ օրիորդական դպրոցում։
23 }
24 } Վանքի մայր եկեղեցւոյ օրիորդական դպրոցում։
26 } Ջրկինեանց եկեղեցւոյ օրիորդական դպրոցում։
27 }

Յունիսի մէկից մինչև Յուլիսի 10ը կըլինին իմ ներկայութեամբ հարցաքննութիւնք Գորւոյ, Սուրամի, Քութայիսի, Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցներում

Թեմական հոգ. Վերատեսուչ Ս. Ք. Տ. Ստեփանեանց

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը ներկայ ապրիլի 26-ից սկսեալ մինչև ցնոր փոփոխութիւն կվերցնէ.

1. Առևտրական մուրհակների զեղջման համար . . . .
   ա. Մինչև 2 ամիս ժամանակով . 6½%
   բ. " 6 " 7%
2. Ապահոված Սօլօ-մուրհակների զեղջման համար. . . . . ,
   ա. Ապրանքով. 6½%
   բ. Անշարժ կալուածքով 7%
3. Փոխատուութիւն տոկոսաբեր թղթադրամների գրաւականով
   ա. Որ վերցնում է թագաւորական բանկայի բաժ. 6½%
   բ. Որ չէ վերցնում թագ. բանկ. բաժ. 7%
4. Փոխատուութիւն ցպահանջ (an call) 6%
5. Աւանդին ընթացիկ հաշուով
   ա. Ապահոված տոկոսաբեր թղթադրամներով 7%
   բ. Անշարժ կալուածքներով 7½%
   գ. Առևտրական մուրհակներով . . 8%
6. Ժամանակաւոր թղթերի և կուպոնների (կուպօն) զեղջման համար 7%
7. Յանձնարարութեան (կոմիսիա) համար 1/10 % մինչև . . . 2%

Թիֆլիսու Մողնու եկեղեցւոյ Աւ քահանայ Ստեփաննոս Մանկինեանց ու աշխատասիրած գիրք "Աստուածպաշտութ թիւն Հայաստանեայց ուղղափառ եկեղեց ւոյ" վերնագրով, որի մէջ բովանդակվա են հարկաւոր գիտելիք Աստուածպաշտ թեան վերայ, բացատրութիւն ժամագ կամ հասարակաց Աստուածպաշտութեա և միւս եկեղեցական գրեանց, որք այժ գործածութեան մէջ են մեր եկեղեցւոյ բացատրութիւն սրբազան խորհրդոց պ տարագի։ Մեկնութիւն եկեղեցական խոր հուրդների, սրբազան արարողութեանց, հ գևոր սովորութեանց և աւանդութեան տօների և կիրակէ օրերի, պահքերի և ե կեղեցական անօթների։ Այս գիրքը առ ջին անգամը լոյս կտեսնէ մեր ազգի մ որպէս ողի Հայոց եկեղեցւոյ. փափա խնդրում է սիրելի ազգայիններից դրամ կան օժանդակութիւն նորա տպագր թեան ծախսի համար, որ և կվաճառ աժան գնով, և ամեն օժանդակող ան կստանայ մի մի հատոր. նոյնպէս կբաժ նուի և ուսումնարանների վերայ ձրի ա լու աղքատ աշակերտաց։ Այս գրքի վ ճառումից յառաջացած դրամը հ. Մա գինեանցն չէ մտադիր ստանալու իւր օ տի համար. այլ պահելով որպէս գլ դրամ կարողանայ հետզհետէ տպագրել միւս աշխատութիւնքը թուով եօթն, և չը զլանալով ազգայինների օժանդ կութեամբը։

(*) Բացի սորանից վերցնում է յանձնարարութեանց համար ½% մինչև %.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 10-го МАЯ 1875 г.

Типографія А. Энфіаджіанцъ и К-о

Տուն Բժշկապետ Մ. Ռօտինեանցի.